ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ. «ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՀԵՏՄԱՀՈՒ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՆՎԻՐՅԱԼ ԶԱՎԱԿՆԵՐԻՆ՝ ԱՌԱՎԵԼ ՊԵՏՔ Է ՄԵԶ՝ ԱՊՐՈՂՆԵՐԻՍ»

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 22 փետրվարի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախագահական նստավայրում ներկա գտնվեց Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանին և վարչապետ Վազգեն Սարգսյանին հետմահու Ազգային հերոսի կոչում շնորհելու և հոկտեմբերի 27-ին զոհված բարձրաստիճան մյուս պետական այրերին հանրապետության պատվո շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու արարողությանը: Ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, պետական բարձրաստիճան անձինք, զոհվածների հարազատներ:

«Հանրապետության համար դժվարին ժամանակներում, որպես երկրի օրենսդիր և գործադիր բարձր իշխանության կրողներ, Հայրենիքի արժանավոր զավակները միավորեցին իրենց ջանքերը որոշիչ բարեփոխումներ իրականացնելու վճռականությամբ, մասնավորաբար Կարեն Դեմիրճյանը՝ քաղաքական, տնտեսական կյանքի առաջնորդության, շինարար գործունեության բազմամյա փորձառությունը ուսերին, և Վազգեն Սարգսյանը՝ հայրենյաց պաշտպան զինվորի, հրամանատարի, Հայոց Ազգային բանակ կազմավորած երիտասարդ նախարարի վաստակով: Նրանք բոլորն էլ նվիրական երազ ունեին. ազատ մեր Հայրենիքը տեսնել խաղաղ երկնքի ներքո բարօր, շեն ու բարգավաճ, լեցուն մեր ժողովրդի երջանիկ ու խնդուն, ստեղծարար կյանքով: Այսօր պարգևների հետմահու հանձնումը Հայրենիքի նվիրյալ զավակներին՝ առավել պետք է մեզ՝ ապրողներիս, որպես ազգային մեր կյանքում արժեքների կարևորում և հայրենաշինության գործում մեր հանձնառության դրսևորում»,- Հայրապետական իր խոսքը ուղղելով ներկաներին՝ ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունն իր աղոթքը հղեց առ Աստված՝ հայցելով Տիրոջ օրհնությունը, որպեսզի իրական դառնա զոհված պետական այրերի՝ Հայրենիքի վերաշինության երազը՝ որպես հատուցում նրանց ընդմիջված կյանքի:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ